

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

#### Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովիկ Աբրահամյանի, Գագիկ Մելիքյանի և Հերմինե Նաղդալյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների փաթեթի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունենք:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքների նախագծերի փաթեթի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի  
սեպտեմբերի 23-ի N 1104-Ն որոշման պահանջներով

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**Ազգային ժողովի պատգամավորների հեղինակած «Հայաստանի Հանրապետության  
Ազգային Ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ  
կատարելու մասին» և Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների  
հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում  
կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում**

«Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի աշխատակազմում պետական  
ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և  
փոփոխություններ կատարելու մասին» և Ֆիզիկական անձանց գույքի և  
եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումը  
առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական  
ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ  
կատարելու մասին» և «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական  
ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ  
կատարելու մասին» և «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի  
հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման  
կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետի  
ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

## Եզրակացություն

**«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի անձնակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի անձնակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը համաձայն նախնական դիտարկման արդյունքների ներկայացված իրավական ակտերի նախագծերի ընդունմամբ մրցակցային միջավայրի վրա զգալի ազդեցություն չի կարող լինել:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքների նախագծերի ընդունման դեպքում դրա կիրարկման արդյունքում մրցակցության բնագավառում զգալի ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում ապրանքային շուկայում մատակարարների քանակի ուղղակիորեն սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:
2. միմյանց հետ մրցելու մատակարարների հնարավորության սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:
3. միմյանց հետ մրցելու մատակարարների շարժառիթների սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի անձնակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի անձնակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքների նախագծերի ընդունման դեպքում դրա կիրարկման արդյունքում տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում զգալի ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:
2. «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչները չեն ներառում կարգավորման ենթակա հայցագրերի ընթացակարգերը:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթերի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

## Եզրակացություն

**<<Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին>> և <<Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի /այսուհետ՝ նախագծեր/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության**

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <<Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին>> N 18-Ն որոշման համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում նախագիծն ունի չեզոք ազդեցություն:

Պ-1068-13.01.2011-ՊԻ-010/0

ՆԱԽԱԳԻՃ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Զ Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱԾԻԱՏԱԿԱԶՄՈՒՄ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն ԶՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հունիսի 11-ի ՀՕ-158 օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի «կարգապահական ներքին կանոններով» բառերը փոխարինել «ներքին կարգապահական կանոններով» բառերով, իսկ 25-րդ հոդվածի 1-ն մասի 5-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին մասի «կարգապահական ներքին կանոններ» բառերը փոխարինել «ներքին կարգապահական կանոններ» բառերով:

*Հոդված 2.* Օրենքի 16-րդ հոդվածը «անփոփոխելի է» բառերից հետո լրացնել « բացառությամբ սույն օրենքով նախատեսված պաշտոնից ազատման հիմքերի բացակայության դեպքում» բառերով:

*Հոդված 3.* Օրենքի 24-րդ հոդվածի 1-ն մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ. «Պետական ծառայողն ունի օրենքով սահմանված այլ իրավունքներ»:

*Հոդված 4.* Օրենքի 25-րդ հոդվածի 1-ն մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ. «Պետական ծառայողն ունի օրենքով սահմանված այլ պարտականություններ»:

*Հոդված 5.* Օրենքի 35-րդ հոդվածի 1-ն մասի 8-րդ կետի «նշանակվելը» բառը փոխարինել «նշանակվելը կամ Ազգային ժողովի կողմից ընտրվելը կամ նշանակվելը» բառերով:

*Հոդված 6.* Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ. «1. Պետական ծառայության ղեկավարման մարմինը

Աշխատակազմի ղեկավարն է, որն է պաշտոնն Ազգային ժողովի Գլխավոր քարտուղարն է»:

*Հոդված 7.* Օրենքի 40-րդ հոդվածի «այդ պաշտոնները» բառերը փոխարինել «պետական ծառայության պաշտոններ» բառերով:

*Հոդված 8.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:



Պ-1068՝-13.01.2011-ՊԻ-010/0

ՆԱԽԱԳԻՏ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԱՆՍ  
ՍԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-164-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը «քաղաքացիական» բառից հետո լրացնել «Ազգային ժողովի աշխատակազմի» բառերով:

*Հոդված 2.* Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը «ա» ենթակետից հետո լրացնել «ա.1» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«ա.1 Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության պաշտոններ զբաղեցնողներից՝ պետական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք» բառերով:

*Հոդված 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է մի շարք դրույթների հստակեցման և հակասությունների վերացման անհրաժեշտությամբ:

Այսպես, Նախագծի 1-րդ հոդվածով առաջարկվել է օրենքի մի շարք հոդվածներում ամրագրված «կարգապահական ներքին կանոններով» բառերը փոխարինել «ներքին կարգապահական կանոններով», որը համահունչ է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 218-րդ և այլ հոդվածներին:

Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունը կվերացնի օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և օրենքով պետական ծառայողին պաշտոնից ազատելու դրույթների միջև առկա հակասությունը:

Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներով առաջարկվող փոփոխությունները ոտղակիորեն առնչվում են ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի հետ, համաձայն որի, բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական անձանց իրավունքները և պարտականությունները:

Նախագծի 5-րդ հոդվածում առաջարկվող լրացումը վերաբերում է Ազգային ժողովի կողմից ընտրվելու կամ նշանակվելու դեպքում պետական ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերին:

Նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունը բխում է միջազգային փորձի ուսումնասիրությունից: Այսպես, Սլովենիայի, Ռումինիայի, Մակեդոնիայի, Բուլղարիայի, Շվեդիայի, Չեխիայի, Էստոնիայի և մի շարք այլ պետությունների խորհրդարանների աշխատակազմերը ղեկավարում են խորհրդարանի Գլխավոր քարտուղարները, որոնք նշանակվում կամ ընտրվում են խորհրդարանի նախագահի կամ խորհրդարանի կողմից: Հետևաբար, առաջարկվում է «Աշխատակազմի ղեկավար» եզրույթին գուցահեռ գործածել «Գլխավոր քարտուղար» եզրույթը:

Նախագծի 7-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունը վերաբերվում է մասնավորապես, օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի «այդ պաշտոնները» բառերը «պետական ծառայության պաշտոններ» բառերով փոխարինելուն, քանի որ «այդ» բառը նշված մասի շրջանակներում ուղղակիորեն շեշտում է միայն օրենքով սահմանված մրցույթային կարգով պետական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողներին, մինչդեռ, օրենքի 21-րդ հոդվածով սահմանված ատեստավորման ինստիտուտը վերաբերվում է պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողներին:

«Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բխում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն որի պետական ծառայողին պաշտոնից ազատելու հիմք կարող է հանդիսանալ պետական ծառայողի կողմից եկամուտների հայտարարագիրը չներկայացնելը, մինչդեռ, «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, քացակայում է պետական ծառայողի կողմից եկամուտների հայտարարագիր ներկայացնելու դրույթը: